

ԳԱՐՉՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ
ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ

Խ. Գ. ՔԱԴՐԿՅԱՆ

Մամուլը, հեռուստատեսությունն ու ռադիոն դարձել են մեր կյանքի անկապտելի մասը. անհնար է այսօր կյանքը պատկերացնել առանց հաղորդակցման լրատվական միջոցների: Մեր հանրապետությունում, Արցախում և աշխարհում տեղի ունեցող հախուռն դեպքերով հագեցած իրադարձությունները ռադիոյի, հեռուստատեսության և թերթերի միջոցով հասնում են Հայաստանի թեկուզև ամենահեռավոր գյուղերի ու բնակավայրերի բնակիչներին: Բնականաբար զանգվածային լրատվության հիմնական միջոցները հասարակական-քաղաքական իրադարձությունների, ժողովրդի սոցիալ-տնտեսական հարաբերությունների, գիտատեխնիկական աննախընթաց աճի, մարզական ու մշակութային կյանքի նորությունների հետ լեզվի ֆորոզության ու մասսայականացման ամենարդյունավետ ճանապարհներն են: Այս ճանապարհներով են զարգանում ու տարածվում նաև գործառական ոճերը՝ իրենց բազմազան դրսևորումներով, սրանց հետ էլ, բնականաբար, լայն տարածում են ստանում նաև դարձվածները, որոնք խոսքը ոճավորելու անփոխարինելի միջոցներ են: Դրանք իրենց նրբերանգներով ու պատկերավորությամբ ոչ միայն արտահայտիչ ու նպատակասլաց են դարձնում գրողի, լրագրողի և ընդհանրապես խոսողի ասելիքը, այլև այն ազատում են շարժությունից ու միապաղաղությունից և մի տեսակ կենդանի շունչ են հաղորդում խոսքին:

Ժողովրդական բառ ու բանին, առածներին ու ասացվածքներին և հատկապես դարձվածներին քաջածանոթ լրագրողների հոգվածները ընթերցողները կարդում են հաճույքով ու առանց ձանձրության:

Հասկանալի է, որ լրագրային ոճն ունի իր առանձնահատկությունները, լեզվի ընդհանուր բառապաշարից ու դարձվածաբանական ընդհանուր համակարգից օգտվելու պատեհ առիթները: Այնուամենայնիվ, ոճային այդ ընդհանուր համակարգում լրագրային ու տեղեկատվական այլ միջոցների առանձին ժանրեր ունեն իրենց հատուկ ոճերը և այդ ոճերում էլ՝ առանձին, հիմնականում դրանց հատուկ դարձվածները:

Ընդգծելի է նաև, որ ժանրային ոճերի տարբերակներում էլ հեղինակի խոսքն ու ոճը առանձնանում է իր հերոսների, գործող անձանց, հոգվածներում հանդես եկող անձնավորությունների լեզվից ու ոճից: Սրանցից յուրաքանչյուրը, բնականաբար, ունի իրեն հատուկ բառապաշարային շերտ, խոսքը ոճավորելու առանձնահատկություն՝ դրանով էլ պայմանավորված՝ դարձվածների ընտրության կարողություն ու վարպետություն:

Մամուլում և լրատվական մյուս աղբյուրներում գործածվող դարձվածները հանդես են գալիս մամուլի լեզվին բնորոշ տարրերով համակցված: Թեև լրագրային խոսքը հիմնականում գրավոր խոսք է՝ ավելի մշակված ու կանոնակարգված, բայց, նայած հոգվածի ոգուն ու բնության, հաճախ այն թո-

Քափում է գրքայնությունը և իր մեջ ներառում կենդանի լեզվի և ժողովրդա-
խոսակցական լեզվի ու ոճի տարրերը: Դրանով ավելի կենդանի, մատչելի
ու պատկերավոր է դառնում լրագրային խոսքը, մանավանդ եթե այդ խոս-
քում առատորեն են գործածվում (իհարկե միայն տեղին ու անհրաժեշտու-
թյան դեպքում) թե՛ ժողովրդական, թե՛ բարբառային, թե՛ մշակված ու գրք-
քային, ինչպես նաև գիտական ոճերին բնորոշ դարձվածներ, առածներ ու
ասացվածքներ, թեև վոր խոսքեր ու արտահայտություններ: Այս դեպքում
շատ կարևոր է նաև լրագրողի, հոդվածագրի ճաշակը, լեզվական իմացու-
թյունը, ժողովրդական բառ ու բանին ծանոթ լինելու աստիճանը: Մամուլն
է այն հիմնական միջոցը, որի մասսայականության շնորհիվ տարածվում են
ոչ միայն մայրենի լեզվում եղած այդ իմաստալից արտահայտությունները,
այլև դրանց նորանոր իմաստներ են վերագրվում, ինչպես նաև կազմվում
են նոր դարձվածներ՝ կապված քաղաքական, տնտեսական ու բազմաթիվ այլ
գործոնների հետ. «Եվ իրոք, հաճախ լայն զանգվածներին հայտնի դարձվա-
ծային արտահայտությունը, որը նախկինում զուրկ է եղել հասարակական-
քաղաքական բովանդակությունից, ստանալով նոր բովանդակություն, դառ-
նում է հրապարակախոսության մեջ հաճախ գործածվող արտահայտություն»¹:

Այս դեպքում լրագրողից մեծ վարպետություն է պահանջվում, որպեսզի
դարձվածներն օգտագործի տեղին ու իմաստին համապատասխան, որպեսզի
նյութը դառնա համոզիչ, կարդացվի հաճույքով և ընկալվի հեշտությամբ.
սա հրապարակախոսության ամենակարևոր հատկանիշներից է:

Զանգվածային լրատվության մեջ դարձվածների միջոցով խոսքն ավելի
ազդեցիկ, դիպուկ, բովանդակալից ու ավելի արտահայտիչ դարձնելը ցույց
տալու նպատակով բերենք տարբեր ժամանակներում մամուլում լույս տեսած
հոդվածներից մի քանի օրինակներ:

«Սովետական Հայաստան» (04. 08. 1985) օրաթերթում լույս տեսած
մի հաղորդման մեջ հոդվածագիրն օգտագործել է մեկ տասնյակից ավել
դարձվածներ: Արժանի բազայի ազնիվ ու բարեխիղճ աշխատողներից մե-
կին աշխատանքից ազատելու համար բազայի պետի հարցը քննվում է տը-
րեստում, սակայն այստեղ ոչ ոք չէր կարող ապացուցել, որ պետի աշխի վե-
րևում հոնք կա: Իսկ դատարանում նույն պետը զառան մօրթի հագած գայլի
նման իրավապահ մարմինների առաջ փորձել է ջրից չոր դառա գալ: Դատա-
րանում բացահայտվել են նաև Արժանի շրջանի աշխատանքի որոշ թերու-
թյուններ, որից օգտվելով, որոշ մարդիկ պղտոր ջրում ձուկ են որսացել:
Միևնույն ժամանակ բացահայտվել է, որ բոլորովին արժանիքներ չունեցող,
կոլեկտիվում հարգանք չվայելող ինչ-որ մեկի առջև կուսակցության շարքերն
անցնելու կանաչ լույս է վառվել, որովհետև նա քաղցրացրել էր կուսքար-
տուղարի բերանը. այս նորաթուխ կուսակցականն էլ, քանի որ պետի աջակ-
ցությամբ էր մազե կամուրջն անցել ու ակտիվ դիրք գրավել նրա նամբա-
րում, և նրա հետ ձեռք ձեռքի տված՝ արիշի ոտքի տակի հողն էին փորում:

Ակնառու է, թե որն է դարձվածի ուժն ու զորությունը, թե մի դարձված
իր մեջ ինչքան լիցք է պարունակում, թե ինչ տարողունակություն ունի ժո-
ղովրդի կողմից խտացված ու վերաիմաստավորված լեզվական այդ միավորը:
Առանց դարձվածների մի՞թե հնարավոր էր այդպիսի դիպուկ բնութագրում-
ներ անել, այդպիսի տարողունակ մտքեր արտահայտել, ինչքան էլ վարպետ
լիներ լրագրողը, ինչքան էլ ճոխ լիներ նրա բառապաշարը: Ա՛յ, իսկապես
այստեղ է ասված, որ դարձվածը մեխը նիշտ տեղին է խփում:

Դարձվածները խոսքը գունազարդելու, խոսքին հուզաոճական լիցք տա-

¹ Ի. Շալունց, Մամուլի և հրապարակախոսության լեզուն, Երևան, 1987, էջ 128:

լու հետ միաժամանակ մարդու, մարդկային հարաբերությունները, թերությունները, բացերն ու արատները ծաղրելու և խարազանելու անփոխարինելի միջոցներ են. այդ իսկ պատճառով էլ լայնորեն օգտագործվում են նաև երգիծական ոճերում. դրանք ֆելիետոնները գեղազարդելու անփոխարինելի միջոցներ են:

Հայտնի է, որ երգիծական պատկերներն ու ծիծաղի տեսակները իրենց հուզական բովանդակությամբ ու նպատակներով տարբեր են. դրանք պայմանավորված են պատկերվող երևույթի էությամբ, գործող անձանց, անհատների պակասությունների ու թերությունների աստիճանով: Կյանքում քիչ չեն այնպիսի մարդիկ, մարդկային հարաբերություններն ու գործելակերպերը որոնք ժողովրդի կողմից խիստ մերժելի են ու դատապարտելի: Կան նաև այնպիսի երևույթներ ու մարդկային հարաբերություններ, որոնց նկատմամբ ժողովրդի քննադատական վերաբերմունքը մեղմ է, հանդուրժողական, և քրննադատությունը նպատակ ունի ուղղել դրանք, մաքրել արատներից. ըստ այդմ՝ լրագրողը, ստեղծագործողը ընտրում է երգիծանքի այս կամ այն տեսակը և դրան համապատասխան՝ դարձվածք: Հայտնի է, որ երգիծանքի այդ տեսակները երկու անվանում ունեն՝ սատիրա և հումոր. այդպես էլ երգիծական դարձվածներն են՝ սատիրական և հումորային: Սակայն, շատ հաճախ, ինչպես գրականության մեջ, այնպես էլ մամուլում ու հրապարակախոսության մեջ երգիծանքի այս երկու տեսակները միաձուլվում են, և դժվար է լինում զանազանել սատիրան հումորից:

Ահա այդպիսի երգիծական գրչով գրված մի հոդված «Խորհրդային դրաքոց» թերթից (24.08. 1989) «Մեծերի օրինակը» վերնագրով: Հոդվածի հեղինակը՝ լրագրող Կարլոս Նղիազարյանը, ինչպես երևում է հոդվածից, ոչ միայն հումորի լավ զգացում ունի, այլև լավ ծանոթ է հայերենի երգիծական դարձվածներին (հոդվածում նրա գործածած 35 դարձվածների մեծ մասը երգիծական բնույթի են): Լրագրողը համապատասխան իրավիճակներում օգտագործելով դարձվածների երկու տեսակները, մի կողմից սատիրայով ծաղրում է Մհերիկի շարալեզու մայրիկին, որն առիթը բաց չի թողնում «կծելու» և «խոշաանգելու» Մհերիկի հորաքրոջը՝ իր տալոջը, որին տանել չի կարող, իսկ մյուս կողմից ֆելիետոնի հեղինակը նուրբ հումորով երգիծում է այդ նույն հորաքրոջն ու Մհերիկի հայրիկին, որը կրակն է ընկել իր շաշանակ կնոջ ձեռքը: Գործող անձինք շորսն են՝ Մհերիկը իր մայրիկի և հայրիկի հետ, հորաքույրը, որն ապրում է հարևան փողոցում, միայն հեռակա կարգով է մասնակցում խոսակցությանը և անընդհատ երգիծվում է Մհերիկի մայրիկի կողմից: Իրադարձությունները պատմում է 5 տարեկան Մհերիկը՝ իր խոսքը առատորեն համեմելով հայրիկի, մայրիկի և հորաքրոջ խոսքերում օգտագործված դարձվածներով:

Հոդվածում դարձվածների առատությունը թեթևություն է հաղորդել խոսքին, որի շնորհիվ հոդվածի ընթերցումը դարձել է դյուրին, հաճելի և շափազանց մատչելի. հանգամանք, որն անհրաժեշտ է երգիծական ժանրին:

ԳՍՐԶՎԱՄԸ ՈՐՊԵՍ ՎԵՐՆԱԳԻՐ— Հայտնի է, որ գրավոր խոսքը՝ գրական ստեղծագործությունը, գիրքը, հոդվածը և այլն գրեթե առանց վերնագրի չի լինում: ԽՆԶ է ՎԵՐՆԱԳԻՐԸ. դա գիտական, պաշտոնական, հրապարակախոսական տեքստերի, հոդվածների նյութի, բովանդակության խտացված անվանումն է: «Գեղարվեստական և հրապարակախոսական շատ տեքստերի վերնագրեր կարող են պայմանական բնույթ կրել, խորհրդանշել տեքստերի բովանդակությունը, դրանք ներկայացնել այլաբանորեն, կամ փոխաբերական

ձևով, ակնարկել որևէ առարկա կամ երևույթ...»²։ Այստեղ էլ դարձյալ անփոխարինելի է դարձվածի դերը. որպես վերնագիր ճիշտ ընտրված դարձվածը շատ տարողունակ կերպով է ներկայացնում հոդվածի կամ ստեղծագործությունն բովանդակությունը։ Դարձվածը՝ որպես խոսքի, մտքի արտահայտման ամենակուռ արտահայտություն, որպես մեկ վերաիմաստավորված բառակապակցություն արտահայտված լեզվական միավոր, հրաշալի կերպով է արտահայտում լրագրողի վերաբերմունքը իր հոդվածում ներկայացված անձանց, առարկաների, մարդկային հարաբերությունների և բազմաթիվ երեվույթների նկատմամբ։ Դրանց միջոցով նա մի դեպքում արտահայտում է իր սերը, հարգանքը, հիացմունքն ու ակնածանքը, մյուս դեպքում՝ ատելությունը, արհամարհանքը, զզվանքն ու զայրույթը։ Դարձվածները առաջին հերթին լրագրողների քննադատական գեներն են, որոնք ավելի ազդեցիկ ու խոցող են, քան իսկական գեները. ահա թե ինչու է ժողովուրդն ասում՝ «Թրի յարեն կլավանա, լեզվի (խոսքի) յարեն չի լավանա»։

Լրագրի վերնագրերի ու ենթավերնագրերի և դրանցում օգտագործվող դարձվածների մասին պետերրուրգի լեզվաբան-ոճաբան Լ. Ս. Փիտենևան իր մի հոդվածում գրում է. «Թերթի ընթերցողի համար յուրահատուկ ուղեցույց են լրագրային հոդվածների վերնագիրն ու ենթավերնագիրը (рубрика)»։ դրանք սրում են ընթերցողի ուշադրությունը, նրա մեջ հետաքրքրություն են առաջացնում տպագրված նյութի, տեղեկատվության, հաղորդվող ինչ-որ բանի վերաբերյալ. դրանք միաժամանակ հակիրճ տեղեկություն են տալիս հաղորդվող նյութի բովանդակության վերաբերյալ։ Վերնագիրն ու ենթավերնագիրը ոչ միայն պետք է անվանեն, նշեն հոդվածի թեման, այլև պետք է տեղեկություն տան փաստի, եղելության մասին և հաղորդեն լրագրողի վերաբերմունքը դրանց նկատմամբ. այս դեպքում մեծ դեր են խաղում կայուն բառակապակցություններն ու դարձվածները, որոնք կարճ են, դիպուկ ու արտահայտիչ և հեշտությամբ են յուրացվում ու ընկալվում ընթերցողի կողմից» (վերնագրերում սովորաբար երկարաշունչ և բարդ նախադասություններ չեն բերվում)³։

Մեր օրերում տարբեր կուսակցությունների ու կազմակերպությունների (նաև անհատների) կողմից լույս տեսնող մի քանի տասնյակից անցնող բազմաբնույթ լրագրերը մեր լեզվի դարձվածային հարուստ շտեմարանից ընտրում են իրենց թերթերի ուղղվածությանն ու հոդվածների բնույթներին համապատասխան դարձվածներ և դրանցով ոճավորում ասվող խոսքը, ներգործում ընթերցողների վրա, ընդգծում ասելիքի կարևորությունը, հետևաբար՝ ավելի հետաքրքիր դարձնում իրենց թերթերն ու հանդեսները։

Որպես վերնագրեր լրագրողները մեծ մասամբ վեցնում են պատրաստի դարձվածներ ու անփոփոխ գործածում։ Օրինակ. «Տաշած քարը գետինն չի մնա» (Դպր. 23.06. 94), «Մախաթը պարկում չես թաքցնի» (Կուռայրի, 12. 11. 95), «Որքան ջրեր են հոսել» (ՀՀ, 28.03. 97) և այլն։

Լրագրողները երբեմն էլ որպես վերնագրեր օգտագործում են ոչ թե ամբողջական դարձվածներ, այլ այն ներառում են իրենց խոսքում՝ որպես վերնագրի բաղադրիչ։ Օրինակ, «Այս խառը օրերին մշակույթը ումի տակ շտախե» (Իրավունք, № 12. 97), «Վերևներում լավ են հասկանում, որ իրենց ձեռք բռնող շկա» (ԳԹ, 01.04. 97), «Հիմա էլ մեքենայից թոչելու ժամանակն է» (ՀՀ, 01.04. 97) և այլն։

² Վ. Զահուկյան, Յ. Խղարյան, Հայոց լեզու 9—10 դաս., Երևան, 1994, էջ 205։

³ Տե՛ս Մ. Ե. Житенева, Ориентиры газетного номера, «Русская речь», М., 1984, № 3, էջ 70։

Մասնուում, ուղիւն և հետուտատեսային հաղորդումներում երբեմն հանդիպում ենք այնպիսի դարձվածների, որոնցում լրագրողները որոշ նպատակով մասնակի փոփոխութուններ են կատարում.

ա) Լրագրողը հաճախ ցանկանում է ավելի սաստկացնել դարձվածի ներգործուն ուժը, ավելի խիստ ներգործել ընթերցողի վրա: Օրինակ, համագործածական և բոլոր ոճերում անփոփոխ գործածվող փոքորիկ մի բաժակ ջրում դարձվածը «Երկրոյան Երևան» թերթը ձևափոխել է փոքորիկ մի կարիլ ջրում տեսքով, որպեսզի ավելի ընդդժի մի հիմնարկում շատ շնչին, անշշան դեպքով մեծ աղմուկ բարձրանալը: Կամ մեկի ջրաղացին ջուր լցնել դարձվածը մի լրագրող օգտագործել է ճակատակոռոյի ջրաղացին ջուր լցնել ձևավորումով: Կամ այս խմբը շատ ջուր կվերցնի համագործածական դարձվածը բրձրղկական, ծառայութան նախկին փոխգնդապետ Աշոտ Աբրահամյանի՝ Զարեհցի մասին պատմող հուշերում ավելի ընդգծված ձևով է գործածվել՝ այս խմբը դեռ շատ ջուր կտանի: Ա. Աբրահամյանը գրում է, որ Մաղկաձորում՝ գրողների տանը իր ընկեր Մուկուչի հետ հանգստանում էին Զարեհցի հարեւանությամբ: 1936 թ. հուլիսի 9-ի, լույս 10-ի գիշերը, ժամը 3-ին Զարեհցը ծեծում է իրենց սենյակի դուռը, շշուկով իր մոտ կանչում իրենց և այլայլված հայտնում. «Դուք պատկերացնում եք, չկա Աղասին, չկա Աղասի Խանջյանը: Թիֆլիսում սպանել են: Հենց նոր Ամերիկայից հաղորդեցին, թե իբր ինքնասպան է եղել: Սուտ է, չհավատաք... ինքնասպանութուն գործում են թուլակամ մարդիկ, իսկ Աղասին ուժեղ կամքի տեր է... Զարեհցի հուզմունքը գնալով սաստկանում էր, գունատված էր: Մերթ ընդ մերթ մոտենում էր սեղանին ու օղի խմում: Կարծես շնչահեղձ էր լինում... Սենյակում մեռելային լուսություն էր... Թվում էր, թե կորցրել էր իր ամենամոտ հարազատին: Զարեհցը նորից մի քանի կում օղի խմելուց հետո մոտեցավ Մուկուչին ու ասաց.

— Դու չես պատկերացնի, թե ինչեր են լինելու... Սա մի սոսկալի աղետի սկիզբն է ազգերի գլխին, հատկապես հայ ազգի: Էս խմորը դեռ շատ ջուր կտանի» (ԳԹ, 01.04. 97):

բ) Լրագրողները հաճախ ոճական որոշ նկատառումներով, ելնելով հոգվածի ոգուց ու ուղղվածութունից, դարձվածի կազմում նույնպես փոփոխութուններ են կատարում: Ահա դրա լավագույն օրինակներից մեկը. «Սատկած էշ է ման գալիս, որ ընտրողների ցուցակում գրանցի» (Իրավունք, 1997, № 15): Երբեմն դարձվածի կազմից որևէ բառ են հանում, կամ՝ ավելացնում, ավելի հաճախ՝ բարբառային և ժողովրդախոսակցական դարձվածները բերում են գրական տեսքի՝ աշխատելով շխաթարել նրա իմաստը, որպեսզի այն շանդադառն դարձվածի բովանդակային կողմի վրա և երկիմաստության տեղիք շտա: Օրինակ, սևին սապոնն ինչ կանի, խեղճ՝ խաւար ժողովրդախոսակցական դարձվածը «Երկիր» թերթը ոչ միայն կրճատում է, այլև փոխում սապոն փոխառյալ բառը՝ սևին օճառն ինչ կանի (Երկիր, 29.01. 93), կամ սայլը տեղից չի շարժվում ԴՄ-ն «Գրական թերթը» ձևափոխել է սայլը մինչև օրս մնում է տեղում ձևով:

գ) Հաճախ լրագրողը, ստեղծագործողը ինչ-որ իրավիճակի համար ինքն է փորձում պատկերավոր ու դիպուկ խոսք ստեղծել՝ ասելիքը տպավորիչ, արտահայտիչ ու ներգործող դարձնելու նպատակով: Ահա երկու օրինակ՝ Խուլ առյուծների ժամանակը (ԳԹ, 02.04. 92), Մոծակներին վերացնելու համար ճանիւր պետք է չորացնել (ԾԾ, 09.04. 97):

Լրագրողները հոգվածների ու հաղորդումների վերնագրեր են դարձնում նաև ժողովրդական գրույցների ու ավանդապատումների վերնագրեր, որոնք տարիների ընթացքում տարածվել են ժողովրդի մեջ, վերաիմաստավորվել ու դարձվածի արժեք ձեռք բերել: Ահա մի երկու օրինակ. «Մինչև Շուշանը զար-

դարվի, պատահազր կարճակվի» (ասվում է, երբ մեկը գործը ձգձգում է, դանդաղում ու ինչ-որ կարևոր գործից, բանից ուշանում): «Որ թուշի էլ, այժ է» (ասվում է շատ համառ, իր ասածի մարդու մասին): «Գաշտից եկած բարձած սայլը նաև դաշտի բուրմունք է իր հետ բերում», «Հեծանիվ պետք չէ հորինել» և այլն:

Գարձվածիները մեծ դեր ունեն նաև հեռուստատեսային և ռադիոհաղորդումների լեզվում, որոնք հաղորդավարի խոսքը ոչ միայն արտահայտիչ ու պատկերավոր են դարձնում, այլև թեթևացնում են հաղորդման նյութը, ունկրնդիրի համար այն դարձնում ավելի մատչելի և դյուրընկալելի: Անհնար է այսօր մեր կյանքը պատկերացնել առանց ռադիոյի ու հեռուստատեսության. թերևս սրանք լրատվական կարևոր ու ամենատարածված միջոցներն են: Լրատվական այս երկու միջոցների կարևորությունն ու ավելի զանգվածային լինելը պայմանավորված է այն բանով, որ նախ՝ մեր օրերում մամուլը դրժվար է հասնում հանրապետության ծայրամասերը (փոստի բացակայության, գեների թանկության և բաժանորդագրություն չլինելու պատճառով), իսկ ռադիոն ու հեռուստատեսությունը մուտք են գործել նույնիսկ ամենահեռավոր գյուղերն ու բնակավայրերը և դարձել ամեն ընտանիքի, ամեն տան ամենակարևոր ու ամենաօգտագործելի առարկաները, և երկրորդ՝ եթե մամուլը հասու չէ ամեն մարդու (ծեր, կույր, անգրագետ), ապա լրատվության այս երկու միջոցները ամենալայն ժողովրդականություն են վայելում: Ասածից բացի, ռադիոյով ու հեռուստատեսությամբ հաճախ հարցազրույցների, դատավարության կամ այլ հաղորդումների ժամանակ իրենց անմշակ, անկաշկանդ ու առանց խմբագրման խոսքն են ասում բարբառախոս, երբեմն էլ անգրագետ մարդիկ, որոնք քիչ չեն դիմում ժողովրդախոսակցական ու բարբառային դարձվածների: Ահա թե ինչու մեք մեր դարձվածների մի մասը գրի ենք առել նման հաղորդումներից, որոնցից մի քանիսի մասին արժե հիշատակել: Օրինակ, 1995 թ. հունվարի 17-ի «Օ2 հաղորդման» ժամանակ խոսեցնում էին մի երիտասարդ կնոջ, որի ամուսինը սպանել էր զոքանիս. քննիչի հարցին նա պատասխանեց. «Ամուսինս ասաց՝ արի մորդ գլուխը ուտեմք ու փողերին և ոսկիներին տեր դառնանք»: Մեկ ուրիշ հաղորդման ժամանակ, երբ լրագրողը մի ծեր կնոջ հարցնում էր իրենց գյուղապետի մասին, նա պատասխանեց. «Աստված էդրան քո տա, եղունգ չտա, մկա էլ ուրիշ բեռ ա կղնա մեր շալակ, էստեղ են ասել՝ մուկը ծակը շի էրթում ա, ցախավելը պոչիցն են կապում»: Հեռուստատեսային մի ներկայացման ժամանակ հարևանի այն հարցին, թե ինչու Մարիամը տղային չի ամուսնացնում, Մարիամը պատասխանում է. «չփլախ ջանին կատու շալկելն էր պակաս»: Ռադիոհաղորդումներից ենք լսել նաև հետևյալ դարձվածները՝ սև շունը լվալով չի սպիտակի, Կայենի կոտաջ հանես, էլի պոչը տնկեց, փշերի վրա եմ նստել, Թունդ ակոյի, աման հավը կշկշան կեղնի, էժ էժին լավ է, քան մեկ սուրու ոշխար և այլն:

Հասկանալի է, որ ռադիո և հեռուստատեսային հաղորդումներում՝ նայած հաղորդման թեմայի, հաղորդումը վարողի կամ ելույթ ունեցողի մակարդակի, կրթական ցենզի, զբաղեցրած պաշտոնի և այլն, մեջբերվում են նաև գրքային, հրապարակախոսական կամ գրական մշակման ենթարկված դարձվածներ:

Ինչպես բառային, բառակապակցային, այնպես էլ դարձվածային նորարանությունների ստեղծման ու տարածման հիմնական աղբյուրը մամուլն ու հեռուստատեսությունն են. դրանց լավագույն ստեղծողները առաջին հերթին գրողներն ու լրագրողներն են: Հիմնականում սրանք են, որ ելնելով իրավիճակի պահանջից՝ նոր երևույթներն ու հարաբերությունները պատկերավոր կերպով բնութագրելու կամ անվանելու համար ստեղծում են նոր դարձվածներ կամ եղածներին նոր իմաստներ են տալիս, կամ էլ դարձվածներ են պատճենում այլ լեզուներից:

Գարձվածային նորարանությունները հիմնականում պայմանավորված են հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխություններով, ինչպես նաև նոր ծնունդ առած իրադարձություններով, երևույթներով ու մարդկային հարաբերություններով: Նոր դարձվածներ են առաջանում նաև գիտության ու տեխնիկայի, արդյունաբերության ու գյուղատնտեսության, մշակույթի ու սպորտի նորությունների հետ կապված:

Բառերի նման նոր դարձվածները ևս կարելի է բաժանել 3 խմբի՝ պատենցիալ, դիպվածային և հեղինակային:

Գարձվածային նորարանությունները անհատական ծագում ունեն. դրանք նախ ստեղծվում են գրողի, լրագրողի, հրապարակախոսի կամ որևէ անհատի կողմից, արտալեզվական գործոնների թելադրանքով, պայմանավորված հասարակական կյանքում առաջացած նոր երևույթներով ու հարաբերություններով՝ այդ երևույթները անվանելու և բնութագրելու նպատակով: Նման նորարանությունները, որ հիմնականում առաջանում են խոսքային մակարդակում, երբ խոսքայինից անցնում են լեզվական մակարդակ, այսինքն՝ դառնում են համագործածական, դադարում են նորարանություն լինելուց:

Այժմ քննարկենք վերջին տարիների փոթորկալից իրադարձությունների, հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխությունների հետևանքով մեր՝ օրեցօր սնկերի նման աճող, բազմաբնույթ, կառավարամետ ու կառավարության դեմ հրատարակվող մամուլում լույս աշխարհ եկած դարձվածային նորարանություններից մեզ հանդիպածները:

Հինգերորդ լսափող վերաիմաստավորված բառակապակցությունը առաջին անգամ գործածեց «Հայաստանի Հանրապետություն» կառավարական պաշտոնական օրաթերթը. սա լրագրողի հորինած խորագիր է, որ նշանակում է լրացուցիչ խոսք, միտք, կարծիք, առաջարկ, որը խորհրդարանում գործող միայն 4 խոսափողներից շի հնչում, այլ լրացուցիչ տեղեկություններ է տալիս ոչ միայն խորհրդարանում քննարկվող հարցերի, այլև ամենաբազմադան խնդիրների, ինչպես նաև հենց պատգամավորների կյանքի ու գործունեության հետ կապված իրադարձությունների մասին: Ուրեմն, հինգերորդ լսասափողը դառնում է պայմանական նշանաբան, և դրա տակ հրապարակվում են այն խնդիրները, որոնք արտահայտվում են պատգամավորների կողմից: Մինչդեռ Մոսկվայի խորհրդարանում աշխատում էր 6 խոսափող, հետևաբար, նրանց արտախորհրդարանական հարցերը քննարկվում էին յոթերորդ լսասափող դարձվածային կիրառություն ստացած խորագրի տակ:

Չորրորդ իշխանություն— Այս անվանում-խորագիրը նույնպես դարձվածային իմաստ ունի. այն ընդօրինակվել է արտասահմանյան լրագրերից, որ մամուլ է նշանակում և մամուլում տպագրում է իշխանություններին կողմ ու դեմ հողվածներ: Այս խորագրով շարաթաթերթ է տպագրվում նաև Հայաստանում, այն ունի միտումնավոր մամուլ բնաբանը, որը նշանակում է որոշակի մտադրությամբ՝ նպատակով հրատարակվող, որոշակի մտադրու-

թյուններ հետապնդող: Ահա այդ լրագրից («Զորորդ իշխանություն», № 31) մի վկայակոչում:

— Եթե շտաբային իշխանությունը լինեք կառավարող, ի՞նչ պաշտոն կտա-
յիք ձեզ այդ կառույցում, — հարցնում են նույն թերթի ազատ լրագրող Վա-
հագն Մկրտչյանին:

— Նախ կցանկանայի, որ շտաբային իշխանությունը իրոք դառնար իշխա-
նություն: Իսկ այդ կառույցում ինձ կտայի ազատ լրագրողի պաշտոն:

Իրավական դաշտից դուրս և խաղից դուրս վիճակում միայն վերջին տա-
րիներին, ստեղծված դարձվածներով լրագրող Ավիկ Մարությունը բնութագրում
է վերևում նշված ազատ մամուլի, այսինքն՝ շտաբային իշխանության դերը մեր
հանրապետությունում: Ահա նրա դատողությունը այս առիթով. «Անշափ կա-
րեորելով գրաքննադատության բացակայությունը, ուզածն ասելու կամ հրա-
պարակելու իրավունքը՝ դա համարում եմ ժողովրդավարության պատրանք,
քանի որ վերահիշյալ բաղկացուցիչների բացակայության պայմաններում ս-
զատ մամուլը դատապարտվում է ինքնանպատակ գործունեության, իրավա-
կան դաշտից դուրս հարաբերություններում հայտնվում է խաղից դուրս վի-
ճակում: Ազատ մամուլի գոյությունը մեզանում ոչինչ է, նրա ձայնը լսող էլ
չկա վերին ատյաններում... դա միայն կասկածողների բերանը փակելու հա-
մար է: Ահա այսպիսի ժողովրդավարության հետ մենք գործ ունենք. ժողո-
վրդավարություն, որը անխորք է և անհիմք, երբ ուզեն մի հարվածով կը-
քանդեն՝ ավագի վրա շարված պատի նման» (Երկիր, 24.09. 97):

Այս ոչ շատ ծավալուն հոդվածում՝ «Տերունի անտերություն» վերնագը-
րով, որը նույնպես պարագոթալ դարձվածային իմաստ ունի, նույն լրագրո-
ղը գործածել է 26 դարձված, որից 14-ը նորաբանություններ են: Բացի նըշ-
վածներից բերենք նաև դրանցից մի քանիսը. վշտոս ճանապարհն անցնող ան-
հասկացող ճամփորդներ (նկատի ունի 90-ական թվականների Հայաստանի
ազգաբնակչությունը), համատարած խավարի մեջ լուսավոր երազներ տեսնել,
ախտահարված արյան մեջ կենսատու շինուկ ներարկել, մարդուն գոյության
փակուղի խցկել, պետության ցուցափեղկում անկախության վերամբարձ
թմբկահարումն է, մաշված ու սեամեջ դատողություններով կերակրվող ժո-
ղովուհ, անճարակության խրամատում անտեսանելի պահվելու նպատակ,
մաֆիական կլանների միջև տարածֆային բաժանում և այլն: Մղձավանջա-
յին տարիներին մարդկանց՝ կառավարող մաֆիաների դեմ ունեցած զայրույ-
թը լրագրող-հրապարակախոսը ավարտում է այսպես՝ «Մարդկանց մաշույն
միայն հացի ողորմաբաժնի կտրոնները, խմորագունդը ծամելու և ցասումը
դուրս թփելու իրավունքը» (Երկիր, 24.09. 1993): Ինչ խոսք, հեղինակային
դարձվածային նորաբանությունների մի մասը դիպվածային դարձվածների
արժեք ունի, որը միայն մեկ անգամվա գործածության իմաստ ունի, իսկ
մյուս մասը, անշուշտ, պոտենցիալ դարձվածներ են, կարող են աստիճանա-
բար օգտագործվել ուրիշների կողմից ու դառնալ համագործածական:

Դարձվածային նորաբանություններով այսօր հագեցած է մեր՝ օրեցօր
աճող մամուլը. գրեթե ցանկացած լրագրի ու հանդեսի ցանկացած համարում
կարելի է հանդիպել նման դարձվածների. բերենք դրանցից մի քանիսը:

Ահա «Հայաստան» շաբաթաթերթի 1997 թ. մարտի 29-ի մեկ համարում
գործածված դարձվածային նորաբանություններից մի քանիսը միայն. երբեմն
սղոցում ենք այն նյութը, որի վրա նստած ենք, երկու ոտքը մեկ ճնամաշ
կռիկի մեջ խցկել, սև կատվի ուրվականն է շրջում մեր մեջ, վերաշինել կո-
տրված սափորը և այլն:

Ինչպես արդեն ասվել է, վերջին տարիների մամուլը լցված է դարձվա-
ծային նորաբանություններով. բերենք դրանցից մի քանիսը ևս.

Հինգերորդ շաբաթյուն (գորաթյուն) դարձվածով նշվում է երկրի ներսում հակառակորդի կողմնակիցներ ունենալու հանգամանքը, ներքին թշնամիների առկայությունը: «Տեղի ունեցավ Հայաստանի Կոմկուսի ունեցվածքի ազգայնացում: Իրադրության բացառիկությունն այն է, որ Հայաստանում չգտնվեց հինգերորդ շաբաթյուն» (ԵՅ, 20.06. 91): «Վերջին ժամանակներում հանրապետությունում ստեղծվել են հինգերորդ գորաթյուններ ու ջոկատներ, որոնք ջուր են լցնում մեր հակառակորդների ջրաղացին» (ՀՀ, 14.04. 95):

Հինգերորդ անկյուն դարձվածը ավելորդություն է նշանակում, մի բան, որը գոյություն չունի, կամ պիտանի չէ. «Առաջ դեկավար պաշտոնների էի: Սկսեցի հանդես գալ թերությունների դեմ և կարծես թե ինձ հակադրեցի մեծամասնությանը... Կարճ ասած՝ ինձ հինգերորդ անկյուն քշեցին... Այնուամենայնիվ, ընկերներս աչքում ես սպիտակ ագռավ եմ» (ՍՀ, 13.05. 88):

Սուսմաթյան հայտնի իրադարձություններից հետո մամուլում ստեղծվեցին մի քանի նոր դարձվածներ՝ կապված անմեղ ժողովրդի նկատմամբ կազմակերպված հաշվեհարդարի հետ. ահա մի քանիսը՝ «Հիմա էլ խեղճ վրացիների զլխին են Սուսմաթ սարժում» (ՀՀ, 11.02. 91), «Ինչպես դարասկզբի հայոց ցեղասպանությունը ներելը հետագայում ծնեց օսվենցիումներ և բուխենվալդներ, այնպես էլ Սուսմաթի առաջ աչք փակելը հետագայում թույլ տվեց Հարավսլավիա, Ռուանդա, Չեչնիա...» (ՀՀ, 28. 98), Սուսմաթի թից մենք մեք դասերն արդեն առել ենք: Աղբբեջանը նույնպես առել է իր դասերը» (ՀՀ, 28.02. 97):

Վերջինս դարձվածներ են ստեղծվում նաև լեզվափոխմամբ բառով, որը օրինականության, իրավունքի իմաստով է գործածվում. «Ուրեք լեզվափոխությանը շափով մեկնիր» (Իրավունք, № 15, 97), «Եղունգ ունես՝ լեզվափոխությունը ֆարի» (Ն. տ.), «Ոչ լեզվափոխ գլուխը ոտների համար տանջանք է» (Ն. տ.):

Եվ այսպես կարելի է շարունակել...

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԹ. — «Գրական թերթ» — լրագիր

Իպր. — «Իպրություն» — լրագիր

ԵԵ. — «Երեկոյան երևան» — լրագիր

ՀՀ. — «Հայաստանի Հանրապետություն» լրագիր

ՍՀ. — «Սովետական Հայաստան» — լրագիր

Х. Г. БАДИКЯН—Фразеологические единицы (ФЕ) в языке средств массовой информации.— Печать, телевидение и радио стали неотъемлемой частью нашей жизни. Эти средства массовой информации, разумеется, способствуют развитию родного языка, его различных стилей. Через них распространяются также новые языковые клише, фразеологизмы, которые стилизуют и окрашивают речь, придают ей образность. В статье рассматриваются употребляемые в языке информации обороты, особое внимание уделяется фразеологическим неологизмам, которые вошли в язык в последние годы в связи с происходящими в общественно-политической, культурной и социально-экономической жизни изменениями. Выделяются употребляемые в качестве рубрик фразеологизмы.